Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈԼԼԵԿՏԻՎՆԵՐԻ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
„ԱԴՐԿՈԼԽՈԶՑԵՆՏՐ“

331·88
4-21

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Ս. Խ. Հ.

ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գինն 6 5 կ.

ԲԱԴՈՒ 1931.

17 MAY 2013

Напечатано в гостипографии
„Красный Восток"
АЗПОЛИГРАФА ВСНХ
Баку, Карантинная, 84.
Главлит 1012. Стат-формат Б
Заказ 2457. Тираж—2500

331.88
Կ-21
05 JAN 2010

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Ս. Խ. Հ. ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կոլեկտիվացման զարգացման, կոլխոզների ամրապնդման և աշխատանքի արտադրողականության ամենամեծ վերելքի խնդիրները պահանջում են լայնորեն ծավալել կոլխոզնիկ մասսաների ինքնագործունեությունը և ինքնաքննադատությունը, զարգացնել նրանց արտադրական նախաձեռնությունը։

Լայն մասսաներին— կոլխոզի անդամներին կոլեկտիվ տնտեսությունների զարգացմանն ու ամրապնդմանն ակտիվ մասնակցության գրավելու հիմնական ձևն արտադրական խորհրդակցությունն է։

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Արտադրական խորհրդակցությունների գլխավոր անելիքներն են՝ ամեն կերպ լավացնել կոլեկտիվ տնտեսությունները, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, մեծացնել

14857-57

տնտեսության ապրանքայնությունը, պայքարել կոլխոզի աշխատանքային դիսցիպլինայի համար, մշակել և հետևել վոր ժամանակին կատարվեն արտադրական ու աշխատանքային պլանները, իրագործել ապրոմինիմումը, կոլխոզ դրավել բատրակ, չքավոր և միջակային մասսաները։

Ըստ առանձին ճյուղերի՝ արտադրական խորհրդակցությունների աշխատանքը տարվում է, մոտավորապես, հետևյալ հարցերի վերաբերմամբ.

ԴԱՇՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ա) ժամանակին նախապատրաստել և տանել հիմնական գյուղատնտեսական աշխատանքները, այսինքն՝ հողի նախապատրաստությունը, վոռոգման սիստեմի մաքրումը, նորոգումը և նախապատրաստումը, ինվենտարի նորոգումը և լրացումը, սերմերի զտումը և ախտահանումը, բանվորական ուժի կազմակերպումը, առանձին կուլտուրաների ցանքի իրագործումը, ժամանակին քաղհանելը, նոսրացնելը (սեյրակացնելը), կուլտիվացիան և այլ խնամք ցանքսերի վերաբերմամբ, բամբակաքաղը, մյուս տեխնիկական և հացահատիկային բույսերի հավաքումը, հացամթերումների ժամանակին կատարումը և բամբակի ու այլ տեխնիկական բույսերի կոոպերացիային հանձնումը և այլն.

բ) աշխատանքային պլանների կատարման ժամկետներն ու լավ վորակը.

գ) ցանքսային տարածությունների լայնացումը.

դ) տեխնիկական բույսերի և բանջարանոցների զարգացումը.

յե) լավացրած ցանքսափոխություն, ազնվացնող ցանքսեր մտցնելը, հողի մշակման լավացրած ձևեր գործադրելը և այլն.

զ) ապահովել ցանքսերը սարայներով, շտեմարաններով, ծխախոտը—չորացնելու սարայներով, գյուղատնտեսական մեքենաները և գործիքները—ծածկելով և այլն։

ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ա) անասունների թիվը քանակությամբ ավելացնելը և տեսակները վորակով լավացնելը.

բ) կոլխոզային համայնացրած հոտերը լրացնելը մթերատու անասուններով,

գ) ազնվացնող ընդմնավորողներ ձեռք բերելը (վորձաձիեր, բուղաներ, վորձ խոզեր և այլն).

դ) Սայուզմյասոյի մթերած մորթելու անասունները կոլխոզներում ժամանակավորապես պահելը.

յե) Զոոմինիմումի իրագործումը.

գ) ուղիղ կերակրելու գործի կազմակերպումը, կերի սիլոսացումը. կեր ավող տարածությունների մեծացումը.

ե) մելիորացիա և հանդերի ու խոտահարքների հասարակ բարելավումները.

ը) բարելաված անասնատներ, գոմեր, վոչխարանոցներ, խոզանոցներ, թռչնանոցներ շինելը.

թ) անասնաբուծական ապրանքային արտադրանքի կոլեկտիվ մշակման կազմակերպումը և կոոպերացիային վաճառելը (շարժական յուղապանրագործարաններ, կաթ հավաքելու կետեր այլն).

ժ) ապրանքային-մթերային անասունների (խոշոր յեղջերավոր կաթնատու անասուններ, վոչխարներ) ամենամեծ չափով համայնացումն ու կոլխոզներում բարձր ապրանքային կաթնատու և վոչխարաբուծական հոտեր ստեղծելը։

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԽԱՂՈՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ա) նոր այգիներ և խաղողի բաղեր տնկելու պլանների քննությունը.

բ) նոր այգի և խաղողի բաղ տնկելու տարածության նախապատրաստումը.

գ) նոր գցվող այգիները և հների լրացումն ապահովել տունկերով.

դ) տածով (ամանեղեն) և համապատասխան շենքերով ապահոված լինելու հարցը.

յե) այգիների և խաղողի բաղերի խնամքն ու բժշկությունը։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ա) աշխատանքի բաժանումը կոլխոզնիկների միջև ու աշխատելու որերի քանակը ամեն մի կոլխոզնիկի-ծխի հասցնելը.

բ) բանվորական ուժի ավելցուկը և պակասումը.

գ) կանանց և դեռահասների աշխատանքի ռացիոնալացումը.

դ) ուրիշ տեղ աշխատանքի գնալը և բեռնակրությունը.

յե) բրիգադների կազմակերպումը.

զ) աշխատանքի նորմայացումը.

ե) կտորով աշխատանքի (սդելշչինա) մուծումը.

ը) աշխատանքի հաշվեառի գնահատումը—աշխատանքային որերով.

թ) պրեմիա տալու և տուգանումների սիստեմ մտցելը.

ժ) աշխատանքային դիսցիպլինա.

ժա) բերքի և յեկամուտների բաշխումը և այլն։

Արտադրական խորհրդակցությունների առաջ դրված խնդիրները լուծելու հիմնական ուղին է՝ կոլխոզնիկներին լայնորեն քաշել խորհրդակցությունների աշխատանքին, նրանցից հաստատակամ ակտիվ-մարտիկներ պատրաստել, վորոնք կարող լինեն ամեն կերպ պայքարել կոլխոզների ամրապնդման և զարգացման համար, կոլխոզային շինարարության ճամբին պատահող դժվարությունները հաղթահարելու համար։

Բոլոր թված միջառումներն իրագործելու համար անհրաժեշտ է ամենամեծ չափերով ծավալել սոցմրցումն ու հարվածայնությունը։ Այդ նպատակով արտադրական խորհրդակցությունները կազմակերպում են հարվածային բրիգադներ, դրանց մեջ են գրավում կոլխոզի բոլոր անդամներին (ժանավանդ կանանց), ստուգում և քննում են հարվածայինների աշխատանքի արդյունքները, հարվածայինների և կոլխոզի անդամների ամբողջ ուշադրությունն ուղղում են աշխատանքի վորակի լավացմանը, արտադրական ու աշխատանքային պլանների կատարմանը և գերակատարմանը։

Արտադրական խորհրդակցությունները կազմակերպում են նաև սոցմրցում կոլխոզնիկների միջև, սովխոզնիկների և արտադրական ձեռ-

նարկների հետ, մշակում են սոցմրցման պայմանագիրը և խիստ հետևում են նրանց իրագործմանը։

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Կազմակերպվում են ընդհանուր-կոլխոզային արտադրական խորհրդակցություններ, իսկ խոշոր կոլխոզներում նաև առանձին ճյուղերում։

Արտադրական խորհրդակցության անդամ են լինում՝ վարչության անդամները, ճյուղերի վարիչները, վերատուգիչ հանձնաժողովի անդամները, բրիգադիրները և ամբողջ կոլխոզային ակտիվը։

Արտադրական խորհրդակցությանը կարող են մասնակցել նաև շրջապատի անհատականները (բատրակ-չքավոր և միջակային մասսաները)։

Եթե կոլխոզը գտնվում է սովխոզի մոտ կամ մեքենատրակտորային կայանի գործունեության ռայոնում, անհրաժեշտ է կոլխոզի արտադրական խորհրդակցությանը գրավել սովխոզի և մեքենա-տրակտորային կայանի բանվորներին ու վարչական-տեխնիկական աշխատողներին, նույնպես էլ կոլխոզնիկները պետք է մասնակցեն սովխոզների և մեքենա-տրակտորային կայանների արտադրական խորհրդակցություններին։

Բոլոր կոլխոզներում, բացի ընդհանուր կոլխոզային արտադրական խորհրդակցություններից՝ կարող են կազմակերպվել նաև առանձին ճյուղերի խորհրդակցություններ։

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Արտադրական խորհրդակցությունները պետք է կանոնավոր կերպով աշխատեն՝ գումարվելով հաստատապես նշանակված ժամկետներին։

Առանձին դեպքերում, յերբ շտապ կերպով պահանջվում է վորևե հարց վճռել, արտադրական խորհրդակցությունները կարող են հրավիրվել ամեն մի որ։

Ընդհանուր կոլխոզային խորհրդակցությունը հրավիրվում է ամսական մեկ անգամից վոչ պակաս, իսկ ճյուղայինը—2 անգամից վոչ պակաս։

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Արտադրական խորհրդակցությունները ոժանդակ որգաններ են՝ կոլխոզների վարչությունների արտադրական գործունեության վերաբերմամբ։

Արտադրական խորհրդակցությունը — խորհրդակցական կազմակերպություն է. դրա համար եվ թե ընդհանուր կոլխոզային և թե ճյուղային արտադրական խորհրդակցությունների վորոշումները քննվում են կոլխոզի վարչության կողմից և կյանքում իրագործվում են վերջինիս ցուցմունքով։

Կոլխոզի վարչությունը պարտավոր է արտադրական խորհրդակցությունների վորոշումները քննել յերեք որվա ընթացքում, իսկ շտապ դեպքերում—մի որվա մեջ։

Կոլխոզի վարչության կողմից հաստատված արտադրական խորհրդակցությունների առաջարկները պետք է անմիջապես իրագործվեն կյանքում։ Նրանց կատարումը պետք է առանձին հաշվի առնվի։

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր կոլխոզային խորհրդակցությունը հրավիրվում է վարչության նախագահի կամ նրա տեղապահի կողմից։

Ճյուղային արտադրական խորհրդակցությունները հրավիրվում են ճյուղի վարիչի կողմից։

Արտադրական խորհրդակցությունների վորոշումների կատարման վերաբերմամբ վերահսկողությունը հանձնվում է կոլխ[illegible] դիչ հանձնաժողովին. իսկ խոր[illegible]

ՀՀ Ազգային գրադարան
NL0205464

24494

համար նյութերի նախապատրաստումը հանձնվում է կոլխոզի վարչությանը և ճյուղերի վարիչներին։

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԼԱՎԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Բրիգադներին և առանձին կոլխոզնիկներին պրեմիա տալու համար՝ համաձայն կանոնադրության՝ կոլխոզի յեկամուտներից կազմվում պրեմիաների հատուկ ֆոնդ։

Այդ ֆոնդի հաշվին պրեմիաներ են տրվում նրանց, ովքեր աշխատանքի բարձր արտադրականություն, աշխատանքի լավ վորակ են ցուցաբերել և այլն։

Կոլխոզի վարչությունն ամեն կերպ պիտի աջակցի կոլխոզի անդամներին և ագրոտեխնիկական գործիչներին՝ նրանց առաջարկած արժեքավոր առաջարկներն իրագործելու համար։

Այն հարվածայիններին, վորոնք գործում առանձնապես աչքի են ընկել, պետք է առաջ քաշել կոլխոզի ղեկավար աշխատանքների համար։

ՀՍՍՀ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՅԿ — ՍՍՌ
им. А. Мицкевича
Ա. ՄԻՑԿԵՎԻՉԻ ԱՆՎԱՆ